ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թ. սեպտեմբերի 12-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ Բ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Արևիկ Մուրադյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցի քննարկում:

1.Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Արևիկ Մուրադյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը: Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 10-րդ Բ դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն:Նախագահի թեկնածու առաջադրվեց Սաթենիկ Ազիզյանը, որից հետո կատարվեց քվեարկություն, որի արդյունքում միաձայն նախագահ ընտրվեց Սաթենիկ Ազիզյանը:

Որոշեցին. - 10-րդ Բ դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

1. /նախագահ/ Սաթենիկ Ազիզյանը
2. /անդամ/ Աբրահամյան Տաթևիկ
3. /անդամ/ Հովակիմյան Կարինե
4. /անդամ/ Մաթևոսյան Հայարփի
5. /անդամ/ Բաբայան Տաթևիկ

2.Լսեցին.- 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Արևիկ Մուրադյանը՝ նշելով, որ այս տարի նոր ուսումնական տարում սահմանվում է հնգօրյա աշխատանքային ռեժիմ, դասեր սկսվում են 9:00-ին և ավարտվում են 15: 00- ին : Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների ուսման հարցում, գրենական պիտույքների, համազգեստների և

հաճախումների նկատմամբ: Տեղեկացրեց նաև, որ 1-ին կիսամյակը բաղկացած է 15 շաբաթից:

Որոշեցին.- Առավել ուշադիր և հետևողական լինել երեխաների ուսման հարցում: Պահել ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը, անհրաժեշտության դեպքում մեծացնել երեխաների վերահսկողությունը, որպեսզի կարողանան առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Ազիզյան Սաթենիկ
Քարտուղար՝ Աբրահամյան Տաթևիկ